ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 16 » սեպտեմբերի 2021 թ. N 146-Ա/1

ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ԴԱՍԸՆԹԱՑԻ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի N 630-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 16-րդ կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշմամբ հաստատված Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 18-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Որդեգրել ցանկացող անձանց համար նախատեսված նախապատրաստական դասընթացի հեռավար կազմակերպման և անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Որդեգրել ցանկացող անձանց համար նախատեսված նախապատրաստական դասընթացի ծրագրի բովանդակությունը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ դասընթացները կազմակերպել՝ առաջնորդվելով ՀՀ կառավարության 2019 թվականի մայիսի 23-ի թիվ 630-Ն որոշմամբ:

3. Նախարարության տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում՝ ապահովել դասընթացի կազմակերպման և անցկացման ժամանակացույցի և ծրագրի բովանդակության վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը նախարարության պաշտոնական կայքէջում:

4. Նախարարության հավասար հնարավորությունների ապահովման վարչությանը՝ սույն հրամանը ուժի մեջ մտնելուց հետո մեկօրյա ժամկետում.

1) նշված տեղեկատվությունը տրամադրել ՀՀ մարզպետարաններին, Երևանի քաղաքապետարանին և «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ պաշտոնական կայքէջերում տեղադրելու նպատակով:

2) վերապատրաստման ենթակա, երեխա որդեգրել ցանկացող անձանց ցուցակները տրամադրել «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ին:

5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանին:

9/16/2021

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2021 թվականի_____N 146-Ա հրամանի
18 սեպտեմբերի

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՌՑԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

Խմբի համարը	**Խմբում ընդգրկված ունկնդիրների թիվը**	**Դասընթացի անցկացման վայրը**	**Դասընթացի անցկացման օրերը, տևողությունը**	**Դասընթացի ծավալը**
1	28	Քաղաք Երևան, **«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ հասցե՝ Ուլնեցու փող., 68 շենք**	22.09.2021-28.09.2021 Ժամը 14.00-16.30	24 ժամ
2	28			24 ժամ
*Մասնակիցները գրանցման համար պետք է ներկայացնեն իրենց էլեկտրոնային հասցեները				

Հավելված N 2

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի

2021 թվականի_________N ______հրամանի

16 սեպտեմբերի 146-Ա/1

ԾՐԱԳԻՐ

ՈՐԴԵԳՐԵԼ ՑԱՆԿԱՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ

1. Դասընթացի նպատակը որդեգրել ցանկացող անձանց՝ որդեգրված երեխաների խնամք ու դաստիարակություն տրամադրելու, նրանց օրինական շահերն ու իրավունքները պաշտպանելու համար անհրաժեշտ իրավական, սոցիալ-հոգեբանական և սոցիալ-մանկավարժական գիտելիքների փոխանցումը և դրանց կիրառման հմտությունների ուսուցանումն է:

2. Դասընթացի թիրախ խումբը որդեգրել ցանկացող անձինք են:

3.Դասընթացի խնդիրներն են՝

1) ծանոթացնել ոլորտը, մասնավորապես, որդեգրման գործընթացը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերին և առկա աջակցող սոցիալական ծառայություններին,

2) ներկայացնել որդեգրման՝ որպես երեխաների խնամքի այլընտրանքային տարբերակի առանձնահատկությունները,

3) փոխանցել գիտելիքներ երեխաների տարիքային զարգացման փուլերի և տարիքային ճգնաժամերի, տրավմայի երեխայի վրա ունեցած ազդեցության մասին,

4) հաղորդել գիտելիքներ որդեգրման ընտանիքի դինամիկայի վրա ունեցող ազդեցության մասին և փոխանցել անհրաժեշտ հմտություններ ուղղված այդ ազդեցությունների կառավարմանը,

5) ուսուցանել անհրաժեշտ ծնողավարման հմտություններ տրավմատիկ փորձառություն ունեցող երեխաների հետ աշխատանքի, երեխայի հետ նոր՝ ամուր կապվածություն ձևավորելու վերաբերյալ,

6) ուսուցանել անհրաժեշտ գիտելիքներ և հմտություններ նոր միջավայրում երեխայի հարմարման գործընթացը սահուն կերպով իրականացնելու համար:

4. Դասընթացի կազմակերպման մեթոդներն են՝

1) հեռավար դասախոսություններ,
2) դեպքի քննարկումներ,
3) դերային խաղեր,
4) տեսաֆիլմերի դիտումներ,
5) այլ գործնական և ուսուցողական մեթոդներ:

Մեթոդները կիրառվում են խառը եղանակով՝ դասաժամերի ընթացքում:

5. Դասընթացի տեղեկատվական աջակցությունը՝ դասընթացի մասնակիցներին կդրամադրվեն թեմային առնչվող նյութեր, դասախոսությունների համառոտագրություններ, գրականության ցանկ:

6. Դասընթացի տևողությունը՝ 24 ակադեմիական ժամ է:

7. Դասընթացից ակնկալվող արդյունքներն են՝ դասընթացի ավարտին ունկնդիրները.

1) ձեռք կբերեն գիտելիքներ.

ա) ոլորտը կարգավորող նորմատիվ-իրավական ակտերի, որդեգրման ընթացակարգի վերաբերյալ.

բ) որդեգրման՝ որպես երեխայի խնամքի այլընտրանքային տարբերակի առանձնահատկությունների մասին.

գ) երեխայի տարիքային զարգացման փուլերի և տարիքային ճգնաժամերի մասին.

դ) կապվածության և դեպրիվացիայի երեխայի զարգացման վրա ունեցող ազդեցության մասին.

ե) ծնողավարման մոդելների, տեխնիկաների և դրանց կիրառման ոլորտների մասին:

2) ձեռք կբերեն հմտություններ.

ա) դրական ծնողավարության և պատշաճ խնամքի իրականացման.

բ) որդեգրման հետ կապված ընտանեկան դինամիկայի փոփոխություններին. այդ թվում ճգնաժամային իրավիճակներում երեխայի տրավմատիկ փորձով պայմանավորված հուզական և վարքային դրսևորումներին արձագանքման.

գ) երեխայի օրինական շահերի և իրավունքների պաշտպանության համար նախատեսված ռեսուրսներից օգտվելու.

դ) որդեգրող ընտանիքում երեխայի հարմարումն արդյունավետ և սահուն կերպով կազմակերպելու.

ե) որդեգրման հետևանքով ընտանիքի անմիջական սոցիալական միջավայրում հնարվոր ռիսկերին արձագանքելու:

8. Դասընթացի արդյունքում մասնակիցներին կհանձնվի ավարտական փաստաթուղթ (հավաստագիր):

9. Որդեգրել ցանկացող անձանց նախապատրաստական դասընթացի ծրագիրը.

h/h	Թեմայի անվանումը	Համառոտ նկարագիրը	Ժամաքանակ
1.	**Որդեգրման գործընթացը կարգավորող նորմատիվ-իրավական բազան և որդեգիր ընտանիքներին աջակցող ծառայությունների շրջանակը**	Ներկայացվում են որդեգրման գործընթացին առնչվող միջազգային իրավական նորմերն ու տեղական կարգավորումները: Անդրադարձ է լինելու որդեգրման ընթացակարգին, մասնավորապես համադրման փուլին, ինչպես նաև ներկայացվելու են այն ռեսուրսներն ու ծառայությունները,որոնք անհրաժեշտության դեպքում կարող են աջակցել որդեգիր ընտանիքներին:	4
2.	**Որդեգրումը՝ որպես երեխայի խնամքի այլընտրանքային տարբերակ**	Ներկայացվում են որդեգրման առանձնահատկությունները երեխայի խնամքի այլընտրանքային ընտանեհեն այլ տարբերակների հետ համեմատությամբ, անդրադարձ է կատարվում որդեգրության տարատեսակներին (տեղական և միջազգային, հարազատական, որդեգրում խնամատարությունից հետո, որդեգրում հաստատությունից) և	2

h/h	Թեմայի անվանումը	Համառոտ նկարագիրը	Ժամաքանակ
		դրանցից յուրաքանչյուրի հիմնական բնութագրիչներին, քննարկվում են յուրաքանչյուր տարբերակի առավելություններն ու հնարավոր ռիսկերը:	
3.	**Երեխայի զարգացման օրինաչափությունները**	Ներկայացվում են երեխայի տարիքային զարգացման փուլերը, յուրաքանչյուր փուլին բնորոշ տարիքային ճգնաժամերը և դրանց ուղեկցող վարքային/հուզական դրսևորումները, ինչպես անև ծնողի և ընտանիքի դերը՝ այդ ճգնաժամերի հաջող հաղթահարման գործում:	4
4.	**Կապվածության ձևավորումը և որդեգիր ընտանիքում երեխայի հարմարման խնդիրները**	Թեմայի շրջանակներում քննարկվելու են կապվածություն և դեպրիվացիա հասկացությունները, մասնավորապես երեխայի հոգեբանական, այդ թվում հուզական և վարքային, զարգացման վրա կապվածության և դեպրիվացիայի ազդեցությունը: Անդրադարձ է լինելու երեխայի մոտ նոր կապվածության ձևավորման առանձնահատկություններին, ինչպես նաև որդեգրող ծնողների՝ որպես կապվածության կորուստը փոխհատուցողների դերին: Թեման ընդգրկում է նաև անդրադարձ երեխայի դիմակայության բարձրացմանն ուղղված և ծնողների կողմից կիրառելի մեթոդներին ու տեխնիկաներին:	6
5.	**Խելամիտ և դրական ծնողավարում**	Քննարկվելու են ծնողավարման մոդելները, դրանցից յուրաքանչյուրի կիրառման ոլորտները, խրախուսանքը և պատիժը՝ որպես ծնողավարման	4

h/h	Թեմայի անվանումը	Համառոտ նկարագիրը	Ժամաքանակ
		տեխնիկաներ, անդրադարձ է լինելու տրավմատիկ փորձ ունեցող երեխաների վարքային և հուզական դրսևորումներին արձագանքելու տեսանկյունից առավել արդյունավետ մեթոդներին:	
5.	**Ընտանեկան դինամիկան որդեգրումից հետո. հարմարում սոցիալական միջավայրում**	Քննարկվելու են որդեգրման ողջ ընթացքում՝ որոշում կայացնելուց մինչև երեխայի տեղավորում և դրանից հետո, ամուսնական զույգի, որդեգիր ընտանիքում այլ անդամների, սոցիալական միջավայրի (ընդլայնված ընտանիք, ընկերներ, դպրոց, մանկապարտեզ, հարևանություն) և որդեգրվող երեխայի վրա խնամքի այս տիպի ունեցած ազդեցություններն ու դրանց կառավարման տեխնիկաները: Անդրադարձ է լինելու այն հարցին, թե ինչպե՞ս է կարելի խոսել որդեգրության մասին որդեգրված երեխայի հետ, ընտանիքի այլ անդամների հետ, սոցիալական միջավայրի ներկայացուցիչների հետ: Թեմայի շրջանակներում քննարկումներն իրականացվելու են՝ օգտագործելով քաղած դասերը ձախողված որդեգրման դեպքերից:	4
	Ընդամենը		**24**

10. Օգտագործվող գրականության ցանկ

- Դրական ծնողավարման ձեռնարկ. Երեխաների դեմ բռնության կանխարգելում, Սեյվ դը չիլդրեն, Երևան, 2011.

- Երեխաների պաշտպանությունը բռնություններից, ձեռնարկ վերապատրաստվողների և երեխաների պաշտպանության մասնագետների համար, Երևան, 2019.
- Երեխաների պաշտպանություն, Ուսումնաօժանդակ ձեռնարկ երեխաների պաշտպանության ոլորտի մասնագետների համար, COAFKIDS, UNICEF, Երևան, 2009թ.
- Տրավմայի ենթարկված երեխաների և դեռահասների բուժումը համագործակցային եղանակով.Տրավմայի համակարգի թերապիայի մոտեցում, Գլեն Ն. Սաքս, Երևան, 2017.
- CATT տեխնիկայով տրավմայի ենթարկված երեխաների հետ աշխատանքի մոտեցումները, Child Trauma International, վերապատրաստման նյութեր, Երևան, 2019.
- Кулагина И.Ю. Возрастная психология. Полный жизнненый цикл развития человека. М.,2001թ.
- Абрамова Г.С. Возрастная психология. Учебник для студентов выших учебных заведений, "Деловая книга", Екатеринбург, 1999
- Дарвиш О.В. Возрастная психология. Учебное пособие для вузов. ВЛАДОС-ПРЕСС, М.,2003
- Кон И.С. Психология ранней юности. Книга для учителя. Москва. 1989
- Ոլորտին առնչվող իրավական ակտեր: